ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«06» դեկտեմբերի 2024թ. N 102-Լ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԵՐԴԻՐԻ ԿԱՍԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորող հանձնաժողովի 2024 թվականի նոյեմբերի 22-ի N 59 արձանագրությունը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Կասեցնել «ԿԱՆԺԻԼՍՏՐՈՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման լիցենզիային կից բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ ներդիրի (ՔՊԼ-001252-04) գործողությունը: Կասեցման ժամկետ սահմանել մինչև խախտման պատճառի վերացումը:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետ Նշան Մարտիրոսյանին՝ ՀՀ լիցենզիաների միասնական էլեկտրոնային գրանցամատյանում կատարել համապատասխան փոփոխություն:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն ընդունելու մասին հրամանում նշված իրավաբանական անձին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

06.12.2024

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ